



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 դեկտեմբերի 2019 թվականի N125-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 26-Ի N 15-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասով, 67-րդ հոդվածի 1-ին մասի «ա» «է» և «ը» ենթակետերով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 2-ի N 1911-Ն որոշման 8-րդ հավելվածի «Կապանի տարածաշրջան» բաժնի 9-րդ կետը՝

որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2005 թվականի հունվարի 26-ի «Քաջարանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հիմնադրման և կանոնադրությունը հաստատելու մասին» N 15-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) «Քաջարանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության՝ հիվանդանոցային թվով 6 նախկին մասնաշենքերը Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին հանձնելու կապակցությամբ 88140000 (ութանասույս միլիոն հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ կազմող կանոնադրական կապիտալը նվազեցնել 65540000 (վաթսուն հինգ միլիոն հինգ հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամով,

2) հիմք ընդունելով «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» փակ բաժնետիրական ընկերության հիմնանորոգման ծախսերի վերաբերյալ 2014 թվականի սեպտեմբերի 26-ի գրությունը «Քաջարանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը ավելացնել 842528000 (ութ հարյուր քառասուն երկու միլիոն հինգ հարյուր քսանույս հազար) ՀՀ դրամով,

3) «Քաջարանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը սահմանել 865128000 (ութ հարյուր վաթսուն հինգ միլիոն հարյուր քսանույս հազար) ՀՀ դրամ:

2. Հաստատել կանոնադրության փոփոխությունը և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2005 թվականի հունվարի 26-ի N 15-Ա

որոշմամբ հաստատված «Քաջարանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության 4.1 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 865128000 (ութ հարյուր վաթսուն հինգ միլիոն հարյուր քսանութ հազար) դրամ, որը կազմում է 1914 (հազար իննը հարյուր տասնչորս) հատ հասարակ (սովորական) անվանական բաժնետոմս, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 452000 (չորս հարյուր հիսուն երկու հազար) ՀՀ դրամ:

Ընկերության բոլոր 1914 (հազար իննը հարյուր տասնչորս) սովորական բաժնետոմսերը տեղաբաշխված են, սեփականության իրավունքով պատկանում են Հայաստանի Հանրապետությանը և լրիվ վճարված են նրա կողմից:

Ընկերության բոլոր բաժնետոմսերը հասարակ (սովորական) են»:

3. Հանձնարարել «Քաջարանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենին՝ ապահովել կանոնադրության փոփոխության պետական գրանցումը Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում:

12/18/2019

X *Մարտիրոս*

ՆԱՐԵԿ ԲԱՐՍՅԱՆ

Подпись: *ՄԱՐՏԻՐՈՍ ԲԱՅԱՅԻՆԱՐԵԿ* 1505920434

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ



ՊՈՂՈՍՅԱՆ

2019թ. դեկտեմբերի 17  
ք. Կապան

Հաստատված է  
Հայաստանի Հանրապետության  
Սյունիքի մարզպետի 2019 թվականի  
դեկտեմբերի 17-ի N 25-Ա որոշմամբ  
«Հայունիքի մարզպետ»

Կ. ՊՈՂՈՍՅԱՆ

« 17 »



Կազմված է 17.11.2019թ. և բաղկացած է 1 թերթից  
Տպագրված է ընդամենը 2 օրինակ  
ՕՐԻՆԱԿ ---

ԳՐԱՆՑՎԱԾ Է  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ  
ՌԵԳԻՍՏՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ  
ԿՈՂՄԻՑ 05. 03.2005թ.

Գրանցման թիվ- 222.120.00469

Վկայական 03Ա 068065

ՀՎՀՀ 09417527

05.03.2005թ. գրանցված կանոնադրության

թիվ --- փոփոխությունը գրանցված է

իրավաբանական անձանց պետական

ռեգիստրի տարածքային բաժնի կողմից

« » \_\_\_\_\_ 2019թ.

## «ՔԱԶԱՐԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն / ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ /

1. «ՔԱԶԱՐԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.  
1). Ընկերության կանոնադրության 4.1 կետի 1-ին պարբերությունը կարդալ հետևյալ նոր խմբագրությամբ.

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 865128000 (ութ հարյուր վաթսուն հինգ միլիոն հարյուր քսանութ հազար) ՀՀ դրամ, որը կազմում է 1914 (հազար ինը հարյուր տասնչորս) հատ հասարակ (սովորական) անվանական բաժնետոմս, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 452000 (չորս հարյուր հիսուն երկու հազար) ՀՀ դրամ:

Ընկերության բոլոր 1914 (հազար ինը հարյուր տասնչորս) սովորական բաժնետոմսերը տեղաբաշխված են, սեփականության իրավունքով պատկանում են Հայաստանի Հանրապետությանը և լրիվ վճարված են նրա կողմից:

Ընկերության բոլոր բաժնետոմսերը հասարակ (սովորական) են:  
2. Սույն փոփոխությունը հանդիսանում է «ՔԱԶԱՐԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության (գրանցված 05.03.2005թ.) բաղկացուցիչ մասը: